

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԳԻ ՆԻՍԻ

Մարզի խորհրդի նիստը վարում էր ՀՀ Կոտայքի մարզպետ Կ.Շահգալդյանը

ք.Հրազդան

30.08.2012թ., ժամը՝ 11⁰⁰

ՄԱՄՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Մարզի խորհրդի անդամ 67 համայնքների ղեկավարներ
Մ. Գարեգինյան- Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ
Ա.Կարապետյան- ՀՀ ԿԳՆ պետական տեսչության պետ
Ա.Արշակյան- ՀՀ ԿԳՆ պետական տեսչության պետի տեղակալ
ՀՀ Կոտայքի մարզպետարանի ենթակայության ուսումնական հաստատությունների և ավագ
դպրոցների տնօրեններ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Զեկույց «Մարզի կրթության բնագավառում 2012-2013 ուսումնական տարվա առկա խնդիրների և առաջիկա անելիքների մասին»:

/ՀՀ Կոտայքի մարզպետ Կ. Շահգալդյան/

2. Կրթության ոլորտում կատարվող բարեփոխումների ընթացքի մասին:

*/ՀՀ Կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության
պետ Ա. Կարապետյան/*

3. Հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հետ տարվող աշխատանքների կազմակերպման և առկա խնդիրների մասին:

*/Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության
բաժնի պետ Ա. Պետրոսյան/*

4. Իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

*/Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսատնօրենագրական բաժնի
պետ Կ. Հունանյան/*

5. Ներդպրոցական խնդիրների մասին:

*/Հրազդանի N8 հիմնական դպրոցի տնօրեն Գ. Գրիգորյան, Հրազդանի N13 ավագ դպրոցի
տնօրեն Հ. Հարությունյան, Արուսյանի N10 հիմնական դպրոցի տնօրեն Լ. Ստուաջյան/*

ԼՍԵՑԻՆՆԵՐ

1. ՀՀ Կոտայքի մարզպետի ղեկուցումը մարզի կրթության բնագավառում 2012-2013 ուսումնական տարվա առկա խնդիրների և առաջիկա անելիքների մասին:

Ջեկուցումն ընդունվեց ի գիտություն: /Կցվում է/

2. ՀՀ Կրթության և գիտության նախարարության կրթության պետական տեսչության պետ

Ա. Կարապետյանի ղեկուցումը կրթության ոլորտում կատարվող բարեփոխումների ընթացքի մասին:

3. Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ա. Պետրոսյանի ղեկուցումը հանրակրթությունից դուրս մնացած երեխաների հետ տարվող աշխատանքների կազմակերպման և առկա խնդիրների մասին:

4. Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Կ. Հունանյանի ղեկուցումն իրականացված ներքին աուդիտի արդյունքների մասին:

5. Հրազդանի N8 հիմնական դպրոցի տնօրեն Գ. Գրիգորյանի, Հրազդանի N13 ավագ դպրոցի տնօրեն Հ. Հարությունյանի, Աբովյանի N10 հիմնական դպրոցի տնօրեն Լ. Սառաջյանի ելույթները ներդպրոցական խնդիրների մասին:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵՑ

Դպրոցի տնօրեններին՝

- Ապահովել նոր ուսումնական տարվա աշխատանքների բնականոն ընթացքը:
- Պատշաճ կերպով կազմակերպել Գիտելիքի և դպրության օրվան նվիրված միջոցառումները:
- Ապահովել սովորողների ռազմա-հայրենասիրական, գեղագիտական և ֆիզիկական դաստիարակության աշխատանքների արդյունավետ կազմակերպումը:
- Լիարժեքորեն պահպանել դպրոցների կարգապահությունն ու աշխատանքային ռեժիմը՝ ուշադրության կենտրոնում պահելով ուսուցման գործընթացի պատշաճ կազմակերպումը:
- Գործնական միջոցներ ձեռնարկել դպրոցներում մասնագիտական դասարանների կահավորման, արդիական տեխնիկական միջոցների արդյունավետ օգտագործման, ինչպես նաև դպրոց-ծնող-համայնք կապի ապահովման ուղղությամբ:



Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ